Գրկ Հարիսեակ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 Թ. ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴՈՒԹՅԱՆ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՅՏ

Երևան 2020 թ.

Բովանդակություն

Կազմակերպության մասին 3

Դրամաշնորհի նպատակն իրականացնելուն միտված միջոցառումների/մոտեցումների նկարագիրը, և դրանց նպատակահարմարության հիմնավորումը, հնարավոր ռիսկերը և դրանց լուծմանն ուղղված գործողությունները, ... 4

Դիտարկման եղանակը 6

Երկարաժամկետ դիտորդություն 6

Կարճաժամկետ դիտորդություն 8

Տեղեկություններ ծրագրում նախատեսվող հիմնական աշխատակազմի մասին, նրանց փորձառությունն ու պարտականությունները 9

Դրամաշնորհային ծրագրեր (վերջին 3 տարվա) 13

Կազմակերպության մասին

Սույն հայտը պատրաստվել և ներկայացվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից:

Կազմակերպությունը հիմնադրվել է 2000 թ. Հուլիսին, իսկ 2001 թ. հոկտեմբերին հավատարմագրվել «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) համաշխարհային հակակոռուպցիոն շարժման կողմից որպես ազգային մասնաճյուղ:

Կազմակերպության նպատակներն են՝

1. աջակցել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությանը և թափանցիկ ու հաշվետու կառավարմանը,
2. աջակցել ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացմանը և ընտրական ինստիտուտի կայացմանը,
3. նպաստել հանրային ռեսուրսների, այդ թվում՝ պետական և համայնքային սեփականության ու ֆինանսական միջոցների ողջամիտ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը,
4. խթանել ժողովրդավարական գործընթացները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և հասարակության մասնակցությունը երկրի կառավարման գործընթացներում:

Հայտով առաջարկվող դիտորդությունը ԹԻՀԿ-ը նախատեսում է իրականացնել «Ականատես» դիտորդական առաքելության շրջանակներում, որը ստեղծվել է 2018թ. օգոստոսին՝ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների ընտրությունների նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու, ընտրական գործընթացների կատարելագործումը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հրապարակայնությունը խթանելու նպատակով: «Ականատես»-ի հիմնադիր անդամներ են հանդիսանում «ԹԻՀԿ» և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունները, «Ռեստարտ» ուսանողական նախաձեռնությունը և «Իրավունքի զարգացման և պաշտպանության» հիմնադրամը: Արցախի Հանրապետությունում (ԱՀ) դիտորդական առաքելության գործընկերն է «Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպությունը:

«Ականատես» նախաձեռնությունը գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություն կատարելուց, որը կարող է մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի), թեկնածուի օգտին կամ դեմ:

Առաքելության մեջ ներգրավված կազմակերպությունները անդամակցում են նաև միջազգային դիտորդական ցանցերի, մասնավորապես «Ընտրությունները դիտարկող կազմակերպությունների եվրոպական ցանցի» (ENEMO), «Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմի» (EPDE), «Տեղական դիտորդների համաշխարհային ցանցի» (GNDEM) անդամ են և տարիների ընթացքում մաս են կազմել մի շարք միջազգային դիտորդական առաքելությունների Վրաստանում, Շվեդիայում, Չեխիայում, Ուկրաինայում, Մոլդովայում, Բոսնիա և Հերցեգովինայում և այլ երկրներում:

Դրամաշնորհի նպատակն իրականացնելուն միտված միջոցառումների/մոտեցումների նկարագիրը, և դրանց նպատակահարմարության հիմնավորումը, հնարավոր ռիսկերը և դրանց լուծմանն ուղղված գործողությունները

Առաջարկվող ծրագրի կարևորագույն նպատակն է աջակցել Արցախի Հանրապետության քաղաքացիական հասարակությանը՝ հանուն Արցախում ազատ և արդար ընտրությունների անցկացման, ինչպես նաև ընտրական ժողովրդավարության զարգացման: Սույն նպատակին հասնելու համար ծրագրով նախատեսվում է լուծել հետևյալ հիմնական խնդիրները՝

1. ապահովել ԱՀ նախագահական և խորհրդարանական ընտրությունների նկատմամբ հանրային վերահսկողությունը, ինչպես նաև ընտրական գործընթացների համապատասխանությունը արցախյան և միջազգայնորեն ընդունված չափանիշներին,
2. խթանել հայաստանյան և արցախյան երիտասարդության ակտիվ մասնակցությունը ընտրությունների հանրային վերահսկողության գործընթացներում:

Խնդիրների լուծման նպատակով ծրագրով նախատեսվում են հետևյալ գործողությունները.

1. ակտիվ երիտասարդների հավաքագրում Հայաստանում և Արցախի Հանրապետությունում երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդության նպատակով, ընդ որում՝ Հայաստանում դիտորդների հավաքագրումը կիրականացվի «Ականատես» դիտորդական առաքելության շրջանակում[1], իսկ Արցախում՝ «Ականատես»-ի գործընկեր «Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպության շրջանակում[2],
2. երկարաժամկետ դիտորդների վերապատրաստում նախընտրական և հետընտրական գործընթացների, մասնավորապես՝ ընտրական համակարգի, ԱՀ նախագահի և ԱԺ ընտրությունների յուրահատկությունների, թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման, նախընտրական քարոզչության, ընտրությունների վարչարարության, ընտրողների ցուցակների, քվեարկության օրվա ընթացակարգերի, ինչպես նաև արդյունքների ամփոփման և խախտումների բողոքարկման վերաբերյալ,
3. կարճաժամկետ դիտորդների վերապատրաստում քվեարկության օրվա, մասնավորապես տեղամասային ընտրական հանձնաժողովներում քվեարկության նախապատրաստման, քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացների վերաբերյալ,
4. երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդների տեղաբաշխում Արցախի Հանրապետության բոլոր 7 վարչական շրջաններում և մայրաքաղաք Ստեփանակերտում (մանրամասների համար տե՛ս «Դիտարկման եղանակը/մեթոդաբանությունը» բաժինը).
5. տվյալների բազայի/առաքելության կառավարման առցանց հարթակի պատրաստում երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդական առաքելության տվյալների հավաքագրման և վերլուծության նպատակով. երկարաժամկետ դիտորդները իրենց աշխատանքների վերաբերյալ զեկույցները ներկայացնելու են առցանց հարթակի, իսկ

---

[1] «Ականատես» դիտորդական առաքելության անդամ կազմակերպությունները ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելու են որպես օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելություն՝ համաձայն ԱՀ ընտրական օրենսգրքով սահմանված ընթացակարգերի:

[2] Համաձայն ԱՀ ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի՝ միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների կազմում որպես դիտորդ Արցախի Հանրապետության քաղաքացիներ ընդգրկվել չեն կարող:

կարճաժամկետ դիտորդները՝ առցանց հավելվածի կամ SMS հաղորդագրությունների միջոցով,

6. երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդության բացահայտումների վերաբերյալ 2 միջանկյալ (նախընտրական քարոզչության վերաբերյալ) և 1 ամփոփիչ զեկույցի պատրաստում և հրապարակում, ըստ անհրաժեշտության՝ նաև մամլո ասուլիսի կազմակերպում,
7. քվեարկության օրվա դիտարկում. քվեարկության օրվա դիտարկման նպատակով կձևավորվի համակարգող կենտրոն՝ բաղկացած օպերատորներից, իրավաբաններից, հաղորդակցության և համակարգող թիմերից:
8. քվեարկության օրվա դիտարկումների հիման վրա հայտարարության պատրաստում և հրապարակում քվեարկության հաջորդ օրը, ասուլիսի կազմակերպում,
9. նախընտրական և քվեարկության օրվա ընթացքում տեղ գտած էական խախտումների վերաբերյալ դիմում-բողոքների պատրաստում և ներկայացում համապատասխան մարմիններ (օր.՝ ընտրական հանձնաժողովներ, Վարչական դատարան, իրավապահ մարմիններ): Ըստ առաքելության դիրքորոշման՝ բողոքարկման ենթակա խախտումներ են հանդիսանում այնպիսի խախտումները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընտրական գործընթացի վրա (օր.՝ կաշառք, բարեգործություն և այլն) և խոչընդոտում են դիտորդների իրավունքների իրականացումը (օր.՝ բռնություն, ճնշում և սպառնալիք):

Հաշվի առնելով «Ականատեսի» զգալի կարողությունները և փորձը տեղական և միջազգային դիտորդական առաքելություններում՝ այս միջոցառումների ընդգրկումը հնարավորություն կտա առաջին անգամ Արցախում կազմակերպել համապետական ընտրական գործընթացների համապարփակ դիտարկում՝ սկսած նախընտրական շրջանից մինչև քվեարկության արդյունքների ամփոփումը, ինչպես նաև՝ գնահատել տվյալ գործընթացների համապատասխանությունը Արցախի Հանրապետության օրենսդրությանը և միջազգայնորեն ընդունված ստանդարտներին: Բացի դրանից, նախագահական և խորհրդարանական ընտրությունների ընթացքում լավ կազմակերպված դիտորդական առաքելությունը կբարձրացնի ինչպես պետական մարմինների, այնպես էլ ընտրական գործընթացի այլ մասնակիցների աշխատանքների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Առաջարկվող միջոցառումներով որդեգրված մոտեցումների հիմնավորումները հետևյալն են.

1. դիտորդական առաքելության ինստիտուցիոնալ և հիերարխիկ կազմակերպումը հնարավորություն է տալիս ապահովել տեղեկատվության ժամանակին հավաքագրումը, ճշգրտումը և համակարգված վերլուծությունը, ինչպես նաև դիտորդների աշխատանքների որակի ընթացիկ վերահսկողությունը և ընտրական գործընթացների վերաբերյալ համապարփակ և վստահելի տեղեկատվության հրապարակումը,
2. դիտորդությունն իրականացվելու է Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում և ներառելու է հաղորդակցություն ընտրական գործընթացի բոլոր մասնակիցներին (օր.՝ ընտրական հանձնաժողովներ, ոստիկանություն, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և թեկնածուների նախընտրական շտաբներ և գրասենյակներ, տեղական ինքնակառավարման մարմիններ, համայնքի բնակիչներ, զանգվածային լրատվության միջոցներ, տեղական և միջազգային հասարակական կազմակերպություններ և այլն),
3. քվեարկության օրը տեղամասերի ընտրությունը կատարվելու է ներկայացուցչական ընտրանքի միջոցով, որը հնարավորություն կտա ստանալ ընդհանուր պատկեր

ընտրական գործընթացների, այլ ոչ միայն կոնկրետ տեղամասերում իրավիճակի վերաբերյալ,

4. վերապատրաստված և ընտրական գործընթացների վերաբերյալ համապարփակ գիտելիքներ ունեցող դիտորդների առկայությունը տեղամասերում հնարավորություն կտա կանխելու հնարավոր խախտումները քվեարկության օրը, ինչպես նաև բացահայտելու համակարգային բացերը և խնդիրները, որոնք հետագայում առաջարկությունների տեսքով կներկայացվեն համապատասխան մարմիններին՝ ընտրական գործընթացներում հետագա բարեփոխումների նպատակով:

Ծրագրի իրականացման ընթացքում ակնկալվող հիմնական ռիսկերն ու դրանց կառավարման մեխանիզմները հետևյալն են.

	Ռիսկի նկարագրություն	**Ազդեցություն (ցածր, միջին, բարձր)**	**Կառավարման, մեղմման և կանխարգելման միջոցները**
1.	Հավաքագրված դիտորդների գիտելիքների ցածր մակարդակ	Միջին	Մասնագիտական դասընթացների կազմակերպում, ինչպես նաև ընթացիկ խորհրդատվության տրամադրում ընտրական գործընթացների վերաբերյալ
2.	Դիտորդների կողմից մերժումների քանակ	Միջին	Նախատեսված դիտորդների քանակից ավելի բարձր քանակի դիտորդների հավաքագրում և վերապատրաստում, ինչպես նաև դիտորդների պահուստային ցուցակների ձևավորում մերժումների դեպքում նոր դիտորդներով փոխարինելու նպատակով:
3.	Դիտորդների իրավունքների խոչընդոտում, ինչպես նաև դիտորդների նկատմամբ բռնություն, ճնշում կամ սպառնալիք	Բարձր	Իրավաբանների թիմի ձևավորում, որը պատասխանատու կլինի իրավաբանական խորհրդատվության, ինչպես նաև խախտումների վերաբերյալ համապատասխան մարմիններ հաղորդումներ և/կամ դիմում-բողոքներ ներկայացնելու համար:

Համաձայն ծախսերի նախահաշվի, ծրագրի բյուջեն կազմում է 60,673,200 ՀՀ դրամ: Ծրագրի ներկայացված նախահաշվում ներառված չէ ընտրությունների առաջին փուլում իրականացվող երկարաժամկետ դիտորդության բաղադրիչը, որի համաֆինանսավորումը ներկայումս իրականացվում է «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից 6,650,000 ՀՀ դրամի չափով:

Դիտարկման եղանակը

Երկարաժամկետ դիտորդություն

Երկարաժամկետ դիտորդական առաքելությունն առանցքային դեր ունի ընտրական գործընթացների վերահսկողության գործում՝ հաշվի առնելով, որ ընտրողների կարծիքների

ձևավորումը փաստացի տեղի է ունենում ոչ թե բուն քվեարկության օրը՝ ընտրատեղամասերում, այլ նախքան ընտրությունները և ենթակա է տարբեր ազդեցությունների: Բացի այդ, խիստ կարևոր է նաև հետընտրական փուլը, քանի որ ընտրական գործընթացների, քվեարկության և արդյունքների վերաբերյալ բողոքների քննության ընթացքը նույնպես արտացոլում է պետության պատրաստակամությունը՝ ապահովելու պատշաճ ընտրությունների կազմակերպում:

Արցախի նախագահական և խորհրդարանական ընտրությունների նախընտրական ժամանակահատվածը գնահատելու նպատակով «Ականատես» դիտորդական առաքելությունը ներգրավել է 16 երկարաժամկետ դիտորդ՝ մայրաքաղաք Ստեփանակերտի և 7 շրջանների 11 ընտրատարածքներում դիտարկելու և գնահատելու նախընտրական և հետընտրական գործընթացները, այդ թվում՝ ընտրությունների վարչարարությունը, ընտրողների ցուցակների պատշաճությունը, թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) շտաբների գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, վարչական ռեսուրսի չարաշահումը, վերահաշվարկը, բողոքների քննությունը և այլն:

Տվյալների հավաքագրումը կատարվելու է ուղիղ դիտարկումների, պաշտոնական հարցումների, հանդիպումների, հարցազրույցների, ինչպես նաև տեղական մամուլի մոնիտորինգի միջոցով: Տեղեկատվության ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով ստացված տվյալները ստուգվելու են մի քանի անկախ աղբյուրների միջոցով:

Երկարաժամկետ դիտորդները տեղերում ակտիվ աշխատելու և համագործակցելու են ընտրական հանձնաժողովների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), նախագահի թեկնածուների նախընտրական շտաբների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ԶԼՄ-ների, քաղաքացիների հետ:

Դիտարկումներն իրականացվելու են նախօրոք մշակված կիսաստանդարտացված հարցաթերթիկների միջոցով, որոնք պարունակում են առանձին հարցախմբեր ընտրությունների վարչարարության, քարոզչության, վարչական ռեսուրսների չարաշահման, թեկնածուների, նախընտրական միջոցառումների, ինչպես նաև այցելած համայնքների վերաբերյալ: Դիտարկումների հիման վրա երկարաժամկետ դիտորդները ներկայացնելու են շաբաթական հաշվետվություններ առցանց հարթակի միջոցով: Դիտարկման արդյունքում ստացված քանակական և որակական տվյալները ենթարկվելու են վերլուծության և ամփոփվելու են նախաձեռնության զեկույցներում, տեղեկագրերում, մամուլի հաղորդագրություններում: Ընտրական գործընթացի վերաբերյալ արձանագրված խախտումների հիման վրա նախաձեռնության իրավաբաններն, ըստ անհրաժեշտության, կազմելու են բողոքներ/հայցեր և հետամուտ են լինելու համապատասխան ատյաններում դրանց ընթացքին:

Նախընտրական շրջանի դիտարկման ընթացքում նախատեսվում է պատրաստել և հրապարակել երկու միջանկյալ զեկույց/տեղեկանք, ըստ անհրաժեշտության կազմակերպել նաև մամլո ասուլիս:

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլի անցկացման անհրաժեշտության դեպքում այդ մասին որոշման ընդունումից անմիջապես հետո երկարաժամկետ դիտորդները կսկսեն երկրորդ փուլի նախընտրական քարոզչության դիտարկումը: Երկարաժամկետ դիտորդների աշխատանքները կավարտվեն նախագահական ընտրությունների երկրորդ փուլի վերջնական արդյունքների ամփոփման ավարտից հետո:

Կարճաժամկետ դիտորդություն

Քվեարկության օրը՝ մարտի 31-ին, առաքելության շուրջ 120 դիտորդներ կդիտարկեն և կգնահատեն քվեարկության նախապատրաստման, քվեարկության, ինչպես նաև քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը Արցախի Հանրապետության 60 ընտրատեղամասերում (բոլոր տեղամասերի շուրջ 20 տոկոսում): Տեղամասերում դիտորդները աշխատանքները կիրականացնեն զույգերով՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ որպես օտարերկրյա հասարակական կազմակերպության առաքելության դիտորդներ, և «Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպության կողմից՝ որպես որպես տեղական դիտորդներ:

Կարճաժամկետ դիտորդությունը կիրականացվի Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում: Տեղամասերի ընտրության համար կկիրառվի ներկայացուցչական ընտրանքի մեթոդը: Ընտրանքային մեթոդաբանության կիրառությունը հնարավորություն կտա ապահովել ընտրական գործընթացի վերաբերյալ ընդհանուր պատկերը ոչ միայն տեղամասերի, այլև՝ ամբողջ հանրապետության մակարդակում:

Բացի տեղամասերի դիտարկումներից, կգործի նաև դիտորդների 10 շրջիկ խումբ, որոնք կշրջեն տեղամասերով՝ գնահատելով նաև տեղամասերի շրջակայքում, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), նախագահի թեկնածուների նախընտրական շտաբներում, տիրող իրավիճակը: Դիտորդները կտեղաբաշխվեն նաև Արցախի բոլոր 11 տարածքային ընտրական հանձնաժողովներում՝ ընտրատեղամասերից պարկերի փոխանցման, քվեարկության արդյունքների աղյուսակավորման և ընտրողների ստորագրված ցուցակների սքանավորման գործընթացը դիտարկելու նպատակով:

Քվեարկության օրը տվյալների հավաքագրման, ինչպես նաև դիտորդների աշխատանքների համակարգման ու վերջիններիս իրավական խորհրդատվության և աջակցության, դիտորդների կողմից հաղորդված խախտումների և միջադեպերի արձանագրման, ինչպես նաև քվեարկության ընթացքի վերաբերյալ հանրային իրազեկման նպատակով կգործի համակարգող կենտրոն: Այն կաշխատի երկու հերթափոխով. 1-ին հերթափոխը կաշխատի քվեարկության օրը առավոտյան ժամը 6:30-ից մինչև 19:00-ն, իսկ 2-րդը՝ 19:00-ից մինչև տեղամասերում քվեարկության արդյունքների ամփոփման ավարտը և արձանագրությունների կազմումը:

Համակարգող կենտրոնը բաղկացած կլինի՝

- 20 օպերատորներից (դիտորդներից ստացվող տվյալների հավաքագրման/մուտքագրման, ինչպես նաև ճշգրտության ստուգման նպատակով),
- 20 իրավաբաններից (դիտորդներին իրավաբանական խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև արձանագրված խախտումների հիման վրա դիմում-բողոքների պատրաստման համար),
- հաղորդակցության թիմից, որը պատասխանատու է ստացված տեղեկատվության հիման վրա հրապարակային նյութերի (օր.՝ մամլո հաղորդագրություններ, տեսանյութեր (ինֆոգրաֆիկաներ), հայտարարություններ և այլն) պատրաստման և տարածման համար,
- շրջիկ և տարածքային ընտրական հանձնաժողովներում դիտորդների համակարգողներից,

- համակարգող թիմից, որը պատասխանատու է համակարգող կենտրոնի ընդհանուր կառավարման և ռազմավարական մակարդակի որոշումների ընդունման համար:

Տվյալների հավաքագրումն իրականացվելու է որոշակի պարբերականությամբ, որի համաձայն դիտորդները սահմանված ժամերին ուղարկելու են տվյալներ SMS հաղորդագրության կամ առցանց հարթակի միջոցով՝ քվեարկության նախապատրաստման, քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ: Տվյալները հավաքագրվելու են նախօրոք մշակված կիսաստանդարտացված հարցաշարերի միջոցով: Դիտարկման արդյունքում ստացված քանակական և որակական տվյալները ենթարկվելու են վերլուծության և ամփոփվելու են նախաձեռնության զեկույցներում, տեղեկագրերում, մամուլի հաղորդագրություններում: Դրանք նաև հիմք են հանդիսանալու օրենսդրական հետագա բարեփոխումների առաջարկությունների մշակման համար: Ընտրական գործընթացի վերաբերյալ արձանագրված խախտումների հիման վրա նախաձեռնության իրավաբաններն, ըստ անհրաժեշտության, կազմելու են բողոքներ/հայցեր և հետամուտ են լինելու համապատասխան ատյաններում դրանց ընթացքին:

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլի անցկացման դեպքում դրա քվեարկության կարճաժամկետ դիտորդությունը կկազմակերպվի նույն մեթոդաբանության կիրառմամբ:

Տեղեկություններ ծրագրում նախատեսվող հիմնական աշխատակազմի մասին, նրանց փորձառությունն ու պարտականությունները

Դիտորդական առաքելությունը կունենա հետևյալ հիերարխիկ կառուցվածքը՝

1. «Ականատես» դիտորդական առաքելության անդամ և գործընկեր կազմակերպությունների ղեկավարներ, ովքեր պատասխանատու են առաքելության ռազմավարական հարցերի վերաբերյալ որոշումների կայացման, ընտրական գործընթացների վերաբերյալ գնահատականների մշակման և ներկայացման համար:
2. Ծրագրի ղեկավար, ով պատասխանատու է դիտորդական առաքելության հիմնական աշխատանքների համակարգման, կառավարման, գործընկերների/շահառուների հետ աշխատանքների, հաշվետվությունների և ծրագրային այլ փաստաթղթերի մշակման և պատրաստման համար:
3. Դիտորդական առաքելության համակարգող, ով պատասխանատու է դիտորդական առաքելության աշխատանքների համակարգման համար:
4. Ծրագրի իրավաբան, ով պատասխանատու է առաքելության զեկույցների և այլ փաստաթղթերի իրավական համապատասխանության ապահովման, ընտրական թիմին ընթացիկ իրավաբանական խորհրդատվության և աջակցության համար:
5. Ծրագրի օգնականներ, ովքեր պատասխանատու են ծրագրերի պատշաճ կազմակերպման և կառավարման գործընթացին անհրաժեշտ տեխնիկական աջակցության համար:
6. Ծրագրի վերլուծաբաններ, ովքեր պատասխանատու են դիտորդներից հավաքագրված տեղեկատվության վերլուծության, ընտրական գործընթացների և լրատվամիջոցների դիտարկման, դիտորդական առաքելության զեկույցների և այլ փաստաթղթերի մշակման հարցում աջակցության համար:

7. Հաղորդակցության համակարգող, ով պատասխանատու է դիտորդության ընթացքում հրապարակային նյութերի (օրինակ՝ տեղեկագրեր, մամլո հաղորդագրություններ, տեսանյութեր, հայտարարություններ և այլն) մշակման և հրապարակման համար:
8. Դիտորդների համակարգողներ, ովքեր պատասխանատու են երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդների հավաքագրման, դասընթացների կազմակերպման, դիտորդների տեղաբաշխման, զեկույցների հավաքագրման գործընթացներում տեխնիկական աջակցության համար:
9. Ֆինանսական, մարդկային ռեսուրսների կառավարման և լոգիստիկ թիմեր, որոնք պատասխանատու են մարդկային ռեսուրսների հավաքագրման, ծառայությունների ձեռքբերման, պայմանագրային հարցերի լուծման և ֆինանսական գործարքների ապահովման համար:

Քվեարկության օրը ձևավորված համակարգող կենտրոնի կազմում կընդգրկվեն նաև՝

1. 20 իրավաբաններ (երկու հերթափոխով), ովքեր պատասխանատու են քվեարկության օրը դիտորդներին իրավաբանական խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև արձանագրված էական խախտումների հիման վրա դիմում, բողոքների և հաղորդումների պատրաստման և համապատասխան մարմիններ ներկայացման համար:
2. 20 օպերատորներ (երկու հերթափոխով), ովքեր պատասխանատու են տեղամասերում գտնվող դիտորդներից առցանց համակարգի միջոցով տվյալների հավաքագրման ապահովման և դրանց ճշգրտության և համապատասխանության ստուգման համար:
3. Շրջիկ դիտորդների 2 համակարգող, ովքեր պատասխանատու են քվեարկության օրը շրջիկ դիտորդներից տվյալների հավաքագրման համար:
4. Տարածքային ընտրական հանձնաժողովների դիտորդների 2 համակարգող, ովքեր պատասխանատու են տարածքային հանձնաժողովներում տեղաբաշխված դիտորդներից տվյալների հավաքագրման համար:

Երկարաժամկետ (16 անձ) և կարճաժամկետ (մինչև 150 անձ) դիտորդների հավաքագրումը կկատարվի Հայաստանում և Արցախում նախօրոք հայտարարված մրցույթի միջոցով: Դիտորդները պատասխանատու են նախօրոք մշակված մեթոդաբանության և հարցաշարերի հիման վրա ընտրական գործընթացների դիտարկման, ինչպես նաև ըստ սահմանված ժամանակացույցի և ձևաչափի հաշվետվությունների տրամադրման համար:

ԹԻՀԿ-ի կազմում գործող ընտրական թիմն ունի զգալի փորձառություն տեղական դիտորդական առաքելությունների կազմակերպման հարցում և ակտիվորեն ընդգրկվել է Վրաստանի, Չեխիայի, Ուկրաինայի, Մոլդովայի ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություններում՝ միջազգային դիտորդական ցանցերի հետ համագործակցության շրջանակներում: Բացի դրանից ընտրական թիմը պարբերաբար մասնակցում է կարողությունների զարգացման տեղական և միջազգային նախաձեռնություններին, որոնք հնարավորություն են ընձեռել թիմին կատարելագործելու գիտելիքները և կարողությունները ընտրական գործընթացների առկա միտումների, դիտորդական առաքելությունների կազմակերպման նորարար մոտեցումների, մեթոդների և գործիքների վերաբերյալ, ինչպես նաև նախապատրաստելու և կազմակերպելու ավելի արդյունավետ և որակյալ դիտորդական առաքելություններ:

Դիմող կազմակերպության ընտրական գործընթացների դիտարկման փորձառությունը

1. 2019թ. դեկտեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների հերթական և արտահերթ ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի թվով 8 (Կոշ, Նորաշեն, Տափերական, Ալաշկերտ, Նորապատ, Դդմաշեն, Զովաբեր, Անուշավան) համայնքներում: Դիտորդության նպատակով ընդգրկվել է 5 երկարաժամկետ և 21 կարճաժամկետ դիտորդ: Ընտրությունների դիտորդության վերաբերյալ տեղեկանքը հասանելի է հետևյալ հղումով՝ https://transparency.am/hy/news/view/2947,
2. 2019 թ. սեպտեմբերի 8-ին Արցախի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարճաժամկետ դիտորդություն Ստեփանակերտում և Ասկերանի, Հադրութի, Մարտունու, Մարտակերտի և Շուշիի շրջանների 4 քաղաքային և 15 գյուղական համայնքներում: Դիտորդության նպատակով ներգրավվել է 103 դիտորդ, 53-ը Արցախից՝ որպես տեղական և 50-ը՝ Հայաստանից՝ որպես օտարերկրյա հասարակական կազմակերպության դիտորդական առաքելության դիտորդներ: Թվով 80 դիտորդ դիտարկել է ընտրական գործընթացները 40 տեղամասում, իսկ 23-ը ներգրավվել է որպես շրջիկ դիտորդ՝ 10 խմբում, որոնք այցելել են լրացուցիչ 81 տեղամաս և դիտարկել են իրավիճակն ինչպես տեղամասային կենտրոններում, այնպես էլ՝ դրանց հարող տարածքներում: Դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://transparency.am/files/publications/1575968677-0-323858.pdf,
3. 2019թ. հունիսի 9-ին Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների հերթական և արտահերթ ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն թվով 7 մարզի 11 համայնքում (39 տեղամաս): Դիտորդության նպատակով ընդգրկվել է 7 երկարաժամկետ և 77 կարճաժամկետ դիտորդ: Դիտորդական առաքելության վերաբերյալ տեղեկանքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://transparency.am/files/publications/1560185626-0-406825.pdf,
4. 2019թ. փետրվարի 17-ին Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների հերթական և արտահերթ ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն թվով 5 մարզի 5 բազմաբնակավայր համայնքներում (26 տեղամաս): Դիտորդության նպատակով ներգրավվել է 6 երկարաժամկետ և 50 կարճաժամկետ դիտորդ:
5. 2018թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն Հայաստանի բոլոր մարզերում:
    - Երկարաժամկետ դիտորդության նպատակով ներգրավվել է 35 դիտորդ 38 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում նախընտրական և հետընտրական գործընթացները դիտարկելու նպատակով:
    - Քվեարկության օրը 575 կարճաժամկետ դիտորդներ դիտարկել են քվեարկության նախապատրաստման, քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացները Հայաստանի 300 տեղամասերում: Տեղամասերն ընտրվել են ընտրանքի վրա հիմնված դիտորդության (SBO- sample based observation) մեթոդաբանության կիրառությամբ: Նման մոտեցումը հնարավորություն է տվել ստանալու պատկեր ընտրական գործընթացի վերաբերյալ ամբողջ հանրապետության մակարդակով:
    - Շուրջ 100 շրջիկ դիտորդներ այցելել են ընտրանքից դուրս եւս 552 տեղամաս և դիտարկել իրավիճակը տեղամասերին հարող տարածքներում:

- 35 դիտորդ հսկել է տեղամասերից քվեարկության պարկերի և քվեարկության արդյունքների աղյուսակավորման գործընթացը 36 տարածքային ընտրական հանձնաժողովներում:

ԱԺ արտահերթ ընտրությունների վերաբերյալ դիտորդական առաքելությունների զեկույցները և հայտարարությունները հասանելի են հետևյալ հղումներով՝

- նախընտրական շրջանի դիտորդության վերաբերյալ նախնական հայտարարություն, նոյեմբերի 22, 2018թ. - https://transparency.am/hy/news/view/2551,
- նախընտրական շրջանի դիտորդության միջանկյալ զեկույց, դեկտեմբերի 5, 2018թ. - https://transparency.am/hy/publications/view/246,
- հայտարարություն «կեղծ» դիտորդական առաքելությունների մասին, նոյեմբերի 26, 2018թ. - https://transparency.am/hy/news/view/2558,
- տեղեկանք ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսների չարաշահման կանխարգելմանը միտված միջազգային սկզբունքների և չափանիշների մասին, նոյեմբերի 27, 2018թ. - https://transparency.am/hy/news/view/2560,
- դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույց, ապրիլի 4, 2019թ. - https://transparency.am/files/publications/1554816519-0-788440.pdf,

6. 2018թ. սեպտեմբերի 23-ին Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների կարճաժամկետ դիտորդություն: Կարճաժամկետ դիտորդության նպատակով ներգրավվել է 155 դիտորդ, որոնք տեղաբաշխվել են Երևանի բոլոր վարչական շրջանների թվով 80 տեղամասերում, որը կազմում է Երևանի 475 տեղամասերի 15%-ը: Տեղամասերի ընտրությունն իրականացվել է պատահական և ներկայացուցչական ընտրանքի միջոցով: Դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://transparency.am/files/publications/1559199168-0-914034.pdf,
7. 2017թ. ապրիլի 2-ին ՀՀ ԱԺ ընտրությունների կարճաժամկետ դիտորդություն («Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում): Դիտորդությունն իրականացվել է Հայաստանի բոլոր 38 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում գտնվող թվով 1522 տեղամասերում: Դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://transparency.am/files/publications/1511343844-0-379811.pdf,
8. 2015 թ. դեկտեմբերի 6-ին Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելություն («Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում): Դիտորդության նպատակով ընդգրկվել է 1000-ից ավելի դիտորդ 520 տեղամասերում՝ հանրաքվեի ընթացքը դիտարկելու նպատակով: Դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://transparency.am/files/publications/1454928096-0-529110.pdf:

Դրամաշնորհային ծրագրեր (վերջին 3 տարվա)

	Ծրագրի անվանում	Ժամկետ	Ծրագրի նկարագիրը/նպատակը	Դրամաշնորհի գումարը	Դրամաշնորհատու կազմակերպություն
1.	Հայաստանի համայնքներում հանրային ծախսերի դիտարկում	Հոկտեմբեր 2019 թ. - մայիս 2020 թ.	Բարելավել տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվողականությունը տեղական բյուջեի ծախսերի մասով, ինչպես նաև խրախուսել համայնքային քաղաքականության և բյուջեի մշակման ու իրականացման մասնակցային գործընթացը Հայաստանի 7 մարզային համայնքներում:	23,238,332 ՀՀ դրամ	ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն Կոնտակտային անձ՝ Լիանա Սահակյան, sahakyanl@state.gov
2.	Արցախի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ն դիտորդական առաքելություն	Օգոստոս – նոյեմբեր 2019 թ.	«Ականատես» դիտորդական առաքելության շրջանակում Արցախի 2019 թ. սեպտեմբերի 8-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դիտարկում	17,480,000 ՀՀ դրամ	ՀՀ Վարչապետի աշխատակազմ
3.	Աջակցություն և ջատագովություն Հայաստանի արդարադատության ոլորտում ծրագրային բյուջետավորման պրակտիկայի բարելավմանը	Մարտ – դեկտեմբեր 2019 թ.	Նպաստել Հայաստանում լավ կառավարմանը քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման գործընթացներում՝ թափանցիկության, հաշվետվողականության և մասնակցության խթանման միջոցով հասարակությանը ներգրավելով և բարեփոխումների համար ջատագովություն նախաձեռնելով:	15,157,501 ՀՀ դրամ	Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան Կոնտակտային անձ՝ Շողիկ Ավանզյան, ashoghik@osi.am
4.	2018թ. ՀՀ ազգային ժողովի արտահերթ	Նոյեմբեր 2018 թ. -	Նպաստել արդար ընտրությունների անցկացմանը Հայաստանում և բարձրացնել ընտրությունների արդյունքների նկատմամբ	18,115,515 ՀՀ դրամ	Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան

	ընտրությունների էլեկտրոնային մոնիտորինգ	մարտ 2019 թ.	բնակչության վստահությունը 2018թ. ՀՀ ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ընտրական թվերի էլեկտրոնային վերլուծության միջոցով:		Կոնտակտային անձ՝ Շողիկ Ավանզյան, ashoghik@osi.am
5.	Դիտորդական կարողություններ ի զարգացում և Հայաստանի Հանրապետությունում ԱԺ ընտրությունների օրինավորության խթանում	Օգոստոս 2018 թ. - դեկտեմբեր 2020	Ազգային և տեղական ընտրություններ դիտորդություն միջազգային փորձի և առաջադեմ մեթոդաբանությունների հիման վրա, այդ թվում՝ ընտրանքային դիտորդության մեթոդով՝ ներգրավելով ընտրությունների դիտարկմանը մասնակցելու ցանկություն ունեցող քաղաքացիների:	219,991,029 ՀՀ դրամ	- Եվրոպական միություն (ԵՄ), Կոնտակտային անձ՝ Լինե Ուրբան, Line.URBAN@eeas.europa.eu - Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, Կոնտակտային անձ՝ Քրիստինա Ուոթս ChristinaW@ned.org - ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ) / Ժողովրդավարության ազգային ինստիտուտ Կոնտակտային անձ՝ Անահիտ Խաչատրյան akhachatryan@usaid.gov - Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան Կոնտակտային անձ՝

					Շողիկ Ավանզյան, ashoghik@osi.am
6.	Հայաստանում ընտրված մի քանի ոլորտներում ծրագրային բյուջետավորման կիրարկման և հանրային ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2016-2020 թթ. միջոցառումների ծրագրի ընտրված միջոցառումների իրականացման մոնիտորինգ	Հունվար 2018 թ. - մարտ 2019 թ.	Նպաստել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը Հայաստանում՝ խթանելով հանրային ֆինանսների կառավարման թափանցիկ ու հաշվետու համակարգի կայացումը: Ծրագիրը մոնիտորինգի ենթարկել և վերլուծել հանրային ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների միջոցառումները, այդ բարեփոխումներին առնչվող Եվրոպական միության (ԵՄ) պայմանները:	19,561,905 ՀՀ դրամ	Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան Կոնտակտային անձ՝ Շողիկ Ավանզյան, ashoghik@osi.am
7.	Ազդարարների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում	Հունվար – դեկտեմբեր 2018 թ.	Ոչ կառավարական հատվածի փորձի կիրառմամբ արդյունավետ պաշտպանություն տրամադրել ազդարարներին, որպեսզի 2018-ից գործող լիովին նոր իրավական ակտի իրականացումը Հայաստանում հարթ ընթանա, հատկապես ազդարարների պաշտպանության մասով:	8,441,640 ՀՀ դրամ	Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն Չեխիայի Հանրապետությունում Թրանսփարենսի Ինթերնեշնլ գրասենյակի միջոցով Կոնտակտային անձ՝ Դավիդ Օնդրաչկա David.Ondracka@transparency.cz

8.	Առաջընթացի դիտարկում, գործողության խրախուսում	Մարտ 2017 – հունվար 2021 թ.	Նպաստել ՔՀԿ-ների կենսագործունեության միջավայրի բարելավմանը, ապահովել նպաստավոր միջավայր գործընկեր երկրներում, ինչպես նաև հզորացնել ՔՀԿ-ների կարողությունները՝ խթանելու փաստացի բարեփոխումներ ապահովող նախաձեռնություններն ու ավելացնելու հանրային հաշվետվողականությունը Արևելյան գործընկերության տարածաշրջանում:	41,998,840 ՀՀ դրամ	Եվրոպական միություն Կոնտակտային անձ՝ Լինե Ուրբան, Line.URBAN@eeas.europa.eu
9.	2017թ. խորհրդարանական ընտրություններում վարչական ռեսուրսի չարաշահման մոնիտորինգ	Հունվար – ապրիլ 2017 թ.	Վարչական ռեսուրսի չարաշահման մոնիտորինգ՝ օրենսդրական, կարգավորիչ, ուժային և ինստիտուցիոնալ՝ նախընտրական քարոզչության միջոցառումների ուղղակի մոնիտորինգի և լրատվամիջոցներում ու սոցիալական ցանցերում տեղ գտած նյութերի կիրառմամբ:	4,801,374 ՀՀ դրամ	Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան Կոնտակտային անձ՝ Շողիկ Ավանզյան, ashoghik@osi.am
10.	2017 թ. խորհրդարանական ընտրությունների դիտորդություն	Հոկտեմբեր 2016 – հունիս 2017	Խթանել ընտրական գործընթացի համապատասխանությունը Հայաստանի օրենսդրությանը և միջազգային չափանիշներին տեղական դիտորդների կարողությունների հզորացմամբ, քվեարկության գործընթացի վերահսկողությամբ, իրավախախտումների դեպքում բողոքարկման համակարգի գործադրմամբ:	57,560,932 ՀՀ դրամ	- Ժողովրդավարության ազգային հիմնադրամ (ԺԱԴ) Կոնտակտային անձ՝ Քրիստինա Ուոթս ChristinaW@ned.org - Թուֆենկյան բարեգործական հիմնադրամ, Կոնտակտային անձ՝ Ռաֆֆի Դուդաքյան raffi.doudaklian@tcf.am

					- Վրաստանում Նիդեռլանդների թագավորության դեսպանատուն Կոնտակտային անձ՝ Լելա Լոմիա lela.lomia@minbuza.nlwww.dutchembassy.ge
11.	2017թ. խորհրդարանական ընտրությունների էլեկտրոնային մոնիտորինգ	Հոկտեմբեր 2016 թ. - մայիս 2017 թ.	Նպաստել արդար ընտրությունների անցկացմանը Հայաստանում և բարձրացնել ընտրությունների արդյունքների նկատմամբ բնակչության վստահությունը 2017թ. խորհրդարանական ընտրությունների ընտրական թվերի էլեկտրոնային վերլուծության միջոցով:	16,044,900 ՀՀ դրամ	Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան Կոնտակտային անձ՝ Շողիկ Ավանզյան, ashoghik@osi.am
12.	Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման	Նոյեմբեր 2014 թ. - մայիս 2021	Ակտիվացնել քաղաքացիների ներգրավվածությունն ու վերահսկողությունը Հայաստանում թափանցիկություն ու հաշվետվողականություն խթանող բարեփոխումների գործընթացներում:	1,870,381,945 ՀՀ դրամ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Կոնտակտային անձ՝ Շողիկ Ավանզյան, ashoghik@osi.am